



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

05.09.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ 1054-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 92/1 ՀԱՍՅԵՌՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետը և հիմք ընդունելով Գայանե Մարգարյանի լիազոր անձ Արամ Ավետիսյանի 2024 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մ. Խորենացու փողոց թիվ 92/1 հասցեում գտնվող 0,0636հա մակերեսով բնակելի կառուցապատման հողատարածքը փոխել հասարակական կառուցապատման հողատարածքի և հողատարածքի վրա առկա 401,59քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման՝ որպես հյուրանոց:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



2024/05/09
Ք.Գորիս